երկրագործությունն արդեն շատ առաջ գնացած լինելով, հացը՝ ծանր աշխատանքի արդյունքը, դարձած էր բարօրության հիմք։

Հաց էին դնում ննջեցյալի քթածակերին՝ քաշկէրի ներս թափանցելն արգելելու համար։ Դնում էին հացը երբեմն նաև ննջեցյալի կրծքին, ոչ թե նրա կերակուրը ապագա կյանքում ապահովելու, որչափ առավելապես քաշկէրի մերձենալուց նրան հեռու պահելու համար։ Այս հացը պահում են և տալիս մեռելից վախեցածներին, որ սրտապնդվեն։ Մի որևէ կտորի մեջ փաթաթած հաց էին պահում նորածին մանկան բարձի տակ։ Աղոթքով հմայողն ածուխի և երկաթե իրի հետ հաճախ և մի կտոր հաց էր պահում ձեռքին իր մագիկ աղոթքն արտասանելիս և այլն։

Մաքուր, համեղ և նուրբ պատրաստած հաց ունենալու պահանջի զարգացման հետ պետք է շաղկապել նաև մաղին վերագրվող զորությունը։ Մաղի օգնությամբ է, որ հացահատիկը մաքրվում է հողից և հետո այլուրից էլ հեռացվում են կոշտ մասերը։ Մաղով էին գուշակություններ անում[113]։ Մաղն էր տղաբերքի ժամանակ պաշտպանում երեխային քաշկէրի հափշտակությունից։ Մաղի միջով քաշկն անցնել չի կարող։ Մի շատ բնորոշ գործողություն է կապվում մաղի հետ. որպեսզի անբուժելի, ծանր հիվանդությամբ տառապող մեկը երկար չչարչարվի և մահն արագ տեղի ունենա, մաղի միջով մաղում էին մոխիրը[114]—ուժը կորցրած ածուխ։ Այլուրի փոխարեն մաղով մոխիր անցկացնելն երևի նպատակ էր հետապնդում դյուրացնել նրա միջով քաշկէրի անցնելը և հիվանդին տիրանալը։ Նրա մահն արագացնելու այդ գործողությունը կատարվում էր երդիկի վրայից, հոգեհանի կորցրած ճանապարհը բանալու համար։ Մաղն էլ գիշերը փոխ չէր տրվում, որ տան հացը չպակասի[115]։

Ավելի հաճախ, քան թե ածուխի, աղի և հացի ու մաղի օգնության, քաշկէրի դեմ պայքարելու համար զանգեզուրցին դիմում էր երկաթի՝ պողպատի զորությանը։ Քաշկէրին ամենից ավելի երկաթն էր կաշկանդողը։ Մեր վերև բերած նկարագրությունների մեջ բազմաթիվ անգամ առիթ ենք ունեցել մատնանշելու այն դեպքերը, երբ քաշկէրից ապահով լինելու համար դիմում էին երկաթի զորությանը[116]։ Երկաթե մի իր, մեծ մասամբ սուր իր՝ դանակ, դաշույն, ասեղ էր դրվում և՛ ծննդկանի, և՛ նորածնի գլխի տակ։ Երեխային լողացնելիս ջրի մեջ էին ձգում երկաթի կտոր, կամ երկու ասեղ։ Այն կնոջ տանը, որի երեխան չէր ապրում, նոր տղաբերի ժամանակ գետնին մեխում էին ժանգոտած մեխ։ Տղաբերի ժամանակ չէին բավականանում երկաթե շղով ծննդկանի շուրջը շրջան խազելուց՝ երկաթե շղթա էին ձգում շեմքից դուրս, քաշկէրի մուտքն արգելելու համար, պողպատի մի կտոր դնում էին բարձի տակ և այլն։

Մեծ պասի վերջին շաբաթվա Օրի ուրբաթ՝ Հուդի ուրբաթ օրը՝ դարբինը շինում էր պողպատե մատանի և պողպատե փոքր չախմախ։ Առաջինը աղջիկն էր հագնում մատին, անկասկած, որպեսզի ինչ բանի որ ձեռք տա՝ քաշկից ազատ մնա։ Երկրորդը կարում էին երեխայի ուսին կամ կռնակի վերին մասին, որպես կայծակից պաշտպանող հմայիլ։ Այս սովորությունը շատերը բացատրում են նրանով, որ քաշկէրը կայծակի ժամանակ դիտմամբ փախուստ են տալիս երեխաների մոտ, որպեսզի կայծակը, որ հատկապես քաշ-

---

113 *Համա.* Լալայեան, Ե., *Բորչալու, Թիֆլիս, 1901, էջ 188։*

114 СМОМПК, вып. XIII, отд. I, *էջ 118։*

115 СМОМПК, вып. XXXIV, отд. III, *էջ 98։*

116 *Чурсин Г. Ф.*, Железо у Кавказских народов, ИКИАИ XI, 1927, *էջ* 67—106։